ՆԻՒԹԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հաւաքեց
ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ· ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ *

ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն եւ վերջ:)

Թ· Թունաւորուելու դէմ:

1· *Թունաւորուելուց կաթը եփ տուր, խմիր:*

2· *Սխտորը ծեծիր քամած մածնի հետ խառն տուր անօթի ուտի:*

3· *Ուտեցուր մածուն, թան, մեղր, բեքմեզ:*

4· *Հաւի իւղը գինով տրորել, խմացնել:*

5· *Օձահարի եւ կարիճի կծելուց նոան կլէպը եփ տուր, դիր վրան:*

6· *Օձահարին անխառն 10 դրախմա եւ ձուեվանդ մի դրախմա կամ աւելի մեղրի հետ խառն ուտեցնել:*

7· *Եթէ օձ կամ կարիճ կծի, լոշտակի տակը եւ ընկոյզը քացախով խառնած եփել, վրան կապել 10 օր, կամ լոշտակը ծեծել, օրեկան մի դրամ ճերմակ գինին հետ խմել:*

8· *Խնձորի տերեւը ծեծիր, ջուրը քամիր խմեցուր:*

9· *Կատաղած շունը կծելուց թթենու տերեւը ծեծիր դիր վրան:*

10· *Կատաղած շան կծածին հին պանիրը քացախով եփիր խմացուր:*

11· *Սաղափը ծեծիր ձէթով, թեփով եւ թէ քացախով շաղախիր դի՛ր կծած տեղի վրայ:*

Ժ· Որկոր-ուռեցի դէմ:

1· *Անալի խմորը իւղի մէջ եռանցնում են, տափակ բաց արած շլնքին դնում:*

2· *Փերփեռ բոյսը կամ չեպը խաշում են եւ դնում ուռած տեղի վրայ, շուտով ուռեցքը քաշում է:*

3· *Շնբփերփետը (տուղտը) խաշում են ջրի հետ ալիւր խառնած շփոթ շինում դնում ուռեցքի վրայ:*

4· *Ծիծեռնակի բոյնը եփում են ճերմակ գինու մէջ կոկորդի վրայ դնում: Մեղրով խառնածը տաքութիւնը քչացնում է երբ ներս է ընդունում կամ դրսից քսում:*

* Հմմտ· ՀԱՆԴ· ԱՄՍ· 1931, էջ 246—252:

ԺԱ· Մէջքը ցաւելուց:

1· *Մէջքը ձեռով կամ ոտով տրորել:*

2· *Մէջքի վրայ պոյտ կամ բաժակներ դնել:*

3· *Պաղ ջրով կամ քացախով տրորել:*

4· *Խարդալ դնել:*

5· *Մէջքը ցաւելուց կամ քամոտ լինելուց լոշտակի ջուրը խմել:*

6· *Կոնատակը եթէ ցաւի, դնա բաղնիս, ճերմակ նաւթ քսիր:*

7· *Եթէ ռեվմատիզմից կոնատակը տաք քամի ունենայ, ցաւի, ճերմակ հողը սառը ջրով շաղախիր, դիր վրան եւ շուտ շուտ փոխիր:*

8· *Կոնատակը եթէ քամի լինի, թուղթ ծեծիր, պախրի իւղը խառնիր հետը, լից մի աման, բերանը ծեփիր, դիր թոնդրի մէջ եփի լաւ, յետոյ հանիր, քսիր, քրտինքը դուրս կու գայ:*

9· *Քամուց (ռեվմատիզմից) եթէ մէջքը կռացել է, գազարի սերմը, ծիրանի սերմը, ձուի դեղնուցը խառնիր, 3 օր կեր:*

10· *Կարմիր քամի ընկնելուց գինձի սերմը թակում են, շորթթու եփ տալիս ճմռում, սերմին խառնում, քսում եւ յետոյ ածելիով մէջքը խազխզում:*

ԺԲ· Փոր-ուռուցի դէմ կամոտի:

1· *Գոմէշի թրիքը սեւ նաւթի մէջ եփում են տաք տաք փորի վրայ դնում:*

2· *Ձիու թրիքը տաք տաք դնում են փորին:*

3· *Դդումը կամ ջրկոտեմը խաշում են դնում փորին:*

4· *Ոտի կամ ծնկան ուռուցի դէմ խնդեղնի տակրին լուանում են, թակում, եփում ջրի մէջ, ալիւր խառնած շփոթ շինում դնում վրան. որից բշտիկներ են գոյանում եւ բացւում:*

5· *Փորկապութեան համար հոնի թթու ուտեցնել:*

6· *Սեւ միզուկը (բոյս) անլուայ բրնձի հետ եփել ուտեցնել:*

7· *Ձկեռ կամ քոլատանձ ուտեցնել:*

ԺԳ· Ռեվմատիզմի դէմ (սանջու տալը, ծակուցները):

1· *Սպիտակ սանդալը օղու մէջ հարում են, քսում ցաւած տեղին:*

2· *Խնձործաղիկը եփում են եւ նրա գոլորշիների վրայ ցաւած տեղը պահում եւ տաւարի ճարպ քսում կամ ուղեղը:*

3· *Խոզի կաշին մորթելուց իսկոյն տաք տաք ձգել վրան:*

4· *Թափած թուքը լցնում են բաց տակառը, երբ սկսում է եփ գալ (խմորվել) հիւանդը մտնում է մէջը մինչեւ վիզը մի ժամ մնում:*

5· *Գանձակի մօտ կայ Նաւթալան ասված տեղը, որ անդ կան սեւ նաւթի հորեր, այդ նաւթը հանում են թափում առուի մէջ, ամառ ժամանակ ծակուցներ ունեցողները մտնում են այդ նաւթի առուի մէջ, մի ժամ եւ աւելի մնում եւ դուրս գալով արեւի տակ պառկած մնում, մինչեւ քրտնելով մարմնի վրայի սեւ նաւթը քերւում թափւում է: Մի քանի օր օգտուելով այդ նաւթից, առողջացած վերադառնում են հիւանդները:*

6· *Ծակուցի առաջը առնելու համար ջինդարները հիւանդին նստեցնում են, կուրծքի վրայ բռնել տալիս մի պղնձի սինի, իրենք հեռանում դռնից կանչում նետ ու աղեղ բռնած*

Գեալդըմ հա գեալդըմ,
հարցնում են. Հարդա՞ն գեալըրսան,
պատասխ. Սանջու դաղընեան,
հարց. Նեայա գեալմըրսան,
պատ. Սանջու վուրմաղա:

Այս ասելուց, նետը բաց է թողնում խփում սինիին, վորից վախեցած հիւանդը, իբրեւ թէ մոռանում է ցաւերը:

ԺԴ· Ջերմ ու տենդի (մալարիա) դէմ:

1· *Ֆիլֆիլը ծեծիր շարբաթ արա տուր խմի:*

2· *Անդախոտը քանդել, եփել, նրա ջրովը լողացնել:*

3· *Սարդը եթէ ծեծուի եւ լաթի մէջ ճակատի կամ քունքի վրայ դրուի, ջերմը կը բժշկուի:*

4· *Սարդի ոստայնը նոյնպէս տաքութեան առաջը առնում է ինչպէս եւ վէրքից արիւն գալուց:*

5· *Լորձունքը ջիւայի հետ խառնել. դէչ ախտերու տաքութիւնը կ'իջեցնէ:*

6· *Արեւ դիպածին կամ տաքութիւն ունեցողին դանդուռը եփիր տաք տաք ճակատին դիր:*

7· *Ջերմի դէմ վերցրու երեք կտոր ունենու փայտ, վրան գրի՝ արլաշ, բարլաշ, դալբաշ, ջերմողի քթի տակ կրակի վրայ ձգիր, մուխը դէպի նրան գնայ:*

ԺԵ· Մազ բուսնելու եւ ներկելու մասին:

1· *Մազ բռնելու համար օձի խորխը այրել, ձէթով շաղախել, քսել:*

2· *Կանեփի կեղեւը եփել եւ նրա ջրովը լուանալ:*

3· *Թէ ուզենայ մարդ որ մազը երկարի, ձիու սմբակը այրել, ջրով շաղախել եւ քսել:*

4· *Թթենու կեղեւը այրել մանուշակի իւղով օծել:*

5· *Թէ մազը թափուի, մկան ծիրտը գլխի վրայ տրորել:*

6· *Մազը թափվելու դէմ ընկուզի կեղեւը այրել, փոշի դարձնել, գինու եւ ձէթի հետ խառնած գլխին քսել:*

7· *Մկան աղբը մեղրով խառնել մազ չբսած տեղին քսել, մազ կը բսնի:*

8· *Մազը սեւացնելու համար խակ ու թթու նուշը վերցնում են մախաթով ծակում, մէջը գէյթունի իւղ ածում եւ արեւում թողում, լաւ եփում եւ այն իւղը պահում մազին քսելու համար:*

9· *Լալայի ծաղիկը շուաքում չորացնում են, ծեծում, գաջ խառնում եւ շիրբախտ իւղ մէկ նուկի (?) լալային քիչ սպիտակ գաջ խառնած դնում են արեւում, քամում, պահում մորուքին քսում, սեւացնում է եւ փայլ տալիս:*

ԺԶ· Զանազան հիւանդութիւնների դէմ:

1· *Եթէ աղիքը ցաւի, լոշտակի արմատը ծեծիր, ջրով 7 օր խմիր կը լաւանայ:*

2· *Եթէ մարդի փայծաղը (դալաղը) տութմա լինի, լոշտակը ու չոր թուզը մխաչափ կշռիր ծեծիր, փայծաղի վրայ 10 օր դիր, օրեկան մի դրամ էլ խմիր, ուռուցը կը քաշվի:*

3· *Եթէ որ մաղձ լինի լոշտակը եփիր, շատ խմիր. եփել այնքան, որ կէսը մնայ:*

4· *Եթէ մարդ ղվաթից ընկել է, լոշտակի պտուղը ծեծիր տուր խմի, զօրութիւնը կ'աւելցնի:*

5· *Եթէ ձեռի մի տեղը կտրվում է, լոշտակի ջուրը ճերմակ գինիով խառնում են, քսում, լաւանում է:*

© National Library of Armenia

6· Եթէ մարդ սովորի օրական մի բաղլայի չափ լոշտակ ուտել, ցաւ չի տեսնել մինչեւ մահը:

7· Եթէ եղունգը ընկնի եւ թարախ դնայ, լոշտակը ծեծիր, ճերմակ մհլամ չինիր վրան դիր· 10 օր մի մի դրամ խմիր:

8· Լոշտակը ճերմակ գինիով, վարդի իւղով ձեռքը օծի 5 անգամ· եթէ քոր տայ եւ կսկծայ լոշտակի ջուրն խմի ճերմակ գինիով 5 օր, կամ վրան կապիր քոր եկած տեղը:

9· Մարդի ոտը կամ ձեռը եթէ փուշ մտնի կամ երկաթ, սամբուլի քոքը ծեծիր, վրան դիր, յետոյ քաշիր հանիր:

10· Բերանից ջուր գալուց մի գլուխ սխտոր ծեծիր քացախով խմիր ճիճուին կը սպանի:

11· Դդումի սերմը կլեպել, ուտել, անգլիական աղ խմել, եւ հում սոխ ուտել· ջուր չխմել ու հաց չուտել այդ օրը· երկրորդը կ'ընկնի:

12· Բերանի հոտի դէմ — վերցնել անիսոնը, բիբարը, դանջափիլը, ծեծել, քացախում եփել բերանը առնել 3—4 օր չարունակել կամ գլխի գագաթից արիւն առնել:

13· Բերանից ջուր գալուց իշու թրիքը տորորի քթի մէջ կաթեցու:

14· Մէզը կապուելուց գարին շատ եփի մինչեւ մհլամ դառնայ, ծածուկ անդամի վրայ դիր կամ քսիր:

15· Եթէ կինը կաթ չունենայ, բողկը եփիր, տրորիր, ջուրը քամիր մեղրով խմիր, կաթ կը բերէ:

16· Եթէ սիրտը ցաւի, աղաջուրը լաւ եփիր, ոտները մէջը դիր:

17· Մարդ թէ մրսած լինի աղաջուրը եփիր եւ մի բուռ թեփ աղաջրի մէջ ձգիր, ոտները մէջը դիր· ջուրը հովանալուց կրկին տաքացնել եւ ոտը մէջը պահել 3 անգամ:

18· Թէ սրտումը թիքա եւ այլ բան լինի, ջուրը եփ տուր, մէջքի վրայ պառկեցուր մի չոր ձգիր կրծքին եւ տաք ջրով ղազանը դիր վրան, գլխատեղը բարձր լինի, փորը ցած:

19· Երեխայի քունը եթէ չտանի, խաշխաշի ձէթը քունքը քսի, կը քնի:

20· Ճիճուի դէմ սխտորը աղով ծեծել, քացախ խառնել եւ խմել: — Ծթորանը, կտեմի սերմը եւ չամանը եփել եւ խմացնել:

21· Այրուածքի համար տուղտի տերեւը ձէթով ծեծել վրան դնել: Սոսինձը հալել եւ ձեռով քսել: Ընկուզի իւղ են քսում· լեղակ կամ մեղր են քսում:

22· Կովի իւղով օծել: Հաւի ծիրտը իւղի հետ խառնած, այրուած տեղին քսելուց կսկծոցը մեղմացնում, բժշկում է: Լեղակ, ձէթ, հինա, ծամօն եփում են դնում վրան:

23· Որ չողինքը չկարենայ կուլ տալ, աղ ու մեղր խառնել, ուտել:

24· Եթէ լեզուն կապ է ընկնում չէ կարողանում խօսել աղբաղբուկը կամ նրա սերմը աղալ եւ մեղրի հետ խառնած բերանը ձգել:

25· Լոշտակի տերեւը ծեծել, ջրի մէջ գինի խառնած խմել երեսի գոյնը կլաւանայ:

26· Մաղասի դէմ բողկը խորովի եւ կեր: — Սոխի ջուրը հանիր մեղր խառնած քիթը ածիր: — Դաղձը հացի հետ ուտել:

27· Ծեռը կապուելուց վերցնում են 50 դրամ կտաւատ, աղում եւ ըռեգանի ջրի հետ խմացնում· իւղը թանի հետ ուտելն էլ օգնում է:

28· Ծաղկացաւից չխտտուելու համար անալի կարագ քսել:

29· Հիւանդին թթու, կծու կամ աղի բան չուտացնել:

30· Քրտնեցնելու համար մալինայի (մորի) թէյ խմացնել:

31· Ոտները տաք ջրի մէջ դնել:

32· Տիչերը տաք ջրով լցնել, դնել ոտքերի տակ անկողնի մէջ:

33· Ծննդկանի ցաւը մեղմացնելու համար ընկուզը իր կեղեւով այրում են փոշի դարձնում, գինու եւ ձէթի հետ խառն քսում գլխին:

34· Ցուրտ տարած տեղի վրայ հին բամբակը օղու մէջ եփել դնել վրան:

35· Քոսի դէմ մարգամիւշը եւ քացախը եփել, սառեցնել քսել մարմնին եւ երեկոյեան լողանալ· տաք, տեղ կամ թոնրի մէջ նստել:

36· Ոջիլի դէմ ջուան ջուր անել խնայով քսել մարմինը կամ չապիկը:

37· Մկնատամի համար բրինձը այրել երկաթի վրայ ու իւղը քսել:

38· Մատնաչունչ (թարախակալելուց) լինելուց, սոխը խորովել եւ դնել վրան: — — Ոչխարի դմակը ծեծել, մածնի ու սոխի հետ խառնել, եփել, դնել վրան:

39· Ջիու վէրքի վրայ դնում են տրխամաշը այրած, մանր կրճած եւ վրայից բրդով ծածկում:

40· Ոտը կարուելուց տորոնը հինում են, վրան բրինձ ածում եւ դնում վէրքի վրայ:

41· Լուի դէմ եզան լեղին ու քակորը (աթարը) քացախի մէջ խառնելով սրսկում են դոշակին:

42· Լուի դէմ վերցնում են սաղափը, մատակ ձիու կաթի մէջ եփում սրսկում չորեղէնին:

43· Օձերը փախչում են չէլիկի տերեւների հոտից, երբ դնում են չորեղէնի մէջ:

44· Վիժեցնելու համար բարձր տեղից թռչում են ցած:

45· — Փորի վրայ երկանք են դնում աղում:

46· — Ծանր բան են դնում փորին:

47· Ալաքլունդ միջատը չորացնում են ծեծում, ջրով կամ գինիով խմացնում:

48· Ծննդականի մէջքի վրայ մի հաց են ձեռով կխում, աղքատին տալիս:

49· Տղամարդի գլխարկ են ծածկում, որ չարը խափանի, կարծի տղամարդ է նրանից հեռանայ:

50· Ծննդկան կնոջ ամուսնու տրեխի կրունկի մէջ ջուր են լցնում, չաղ տալիս կրծքին, որ արգանդը բացուի:

ՅԱԿՈԲ ԹՈԽԱԹԵՑԻՈՑ

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԵՐԿՐԻՆ ՕԼԱԽԱՑ

Յակոբ երէց Թոխաթեցի ծանօթ է արդէն իւր կենսագրութեամբ եւ գրական երկերով[1]: Ապրած է երկարամեայ կեանք մը (1573—1680), մեծաւ մասամբ պանդխտութեան մէջ ի Զամոսցա Լեհաց աշխարհին:

Կը պակսէին մեզի տեղեկութիւններ իր բազմամեայ կեանքին առաջին երեսնամեակի մասին. այս պակասը կը լրացնէ այժմ մասամբ Ողբն ի վերայ Օլախաց երկրին, որ առաջին անգամ հրապարակ կու գայ Հանդէս Ամսօրեայի էջերու մէջ: Կը յայտնուի այժմ թէ Յակոբ Թոխաթեցի 1593ին արդէն ելած էր իւր հայրենիքէն եւ կը պանդխտէր Մոլտաւիայի Եաշ քաղաքը, ուր տեղւոյն եպիսկոպոսը Յովհաննէս Կաֆացի ցոյց տուած է իրեն հայրական գորով եւ շնորհած չորս փոքր աստիճանները, որով եղած է Յակոբ «դպիր»: Հաւանօրէն նոյն Յովհաննէս եպիսկոպոսէն ընդունած է Յակոբ նաեւ քահանայական ձեռնադրութիւնը 1595 թուականէն ոչ շատ ուշ:

1601/2ին, երբ Յովհաննէս Զամոսկի, Լեհաց սպարապետն եւ «քանցլէրը» հիմնարկեց իւր անուամբ Զամոսցա քաղաքը, նորակառոյց քաղաքին պարիսպները ընդունեցան իրենց ներսը նաեւ մեծաթիւ հայեր, որոնք ունեցան իրենց սեպհական եկեղեցին ալ: Կ'երեւայ թէ այս առթիւ հրաւիրուեցաւ նորընծայ քահանայն Յակոբ Թոխաթեցի ըլլալու Զամոսցայի հայ գաղթականութեան հովիւ:

Վերոյիշեալ աշխատութեանս մէջ ամփոփած էի այն ամէն յիշատակարանները, որոնք կը խօսէին Յակոբ Թոխաթեցւոյ մասին: Թոյլ կու տամ ինձ կցել անոնց նաեւ հետեւեալները, որոնք վերջերս մատչելի եղան ինձ եւ կը նպաստեն լուսաւորելու Յակոբի կենսագրութիւնը.

1· Փառք… Արդ գրեցաւ քրիստոսահիմն եւ առաքելազարդ հոգեխրախ տառս կանոնական ի մայրաքաղաքն Իլով ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ձեռամբ Զախնօ ս(արկաւա)գին ի թուականիս հայկազմանունի ՌԾԱ· ամի… (ի) դատաւորութեանն Պարոն Խսան պէյին սորին իսկ ստացողի· որ մեծաւ ջանիւ… նախանձայոյզ եղեալ հայրենի յիշատակացն եգիտ զգաղափար սորա առ քահանայ մի Խաչատուր կոչեցեալ եւ ծանեաւ որ իւրոց նախնեացն էր եւ կամեցաւ առնուլ ի ձեռանէ նորա եւ տալ յիշատակ ի նորաշէն քաղաքն Զամօսցա ի յեկեղեցին սուրբ Աստուածածնին: Բայց տէր Խաչատուրն յոյժ գրաւէր էր եւ առաւել եւս հին օրինակաց· վասն այն շատ աղաչեցեալ զպարոն Խսան պէյ դատաւորն եւ ետ գրել զսա փոխան նորա եւ ետ պարոն Խսան պէյին· վասն զի օրինակն նորա յոյժ ընտիր

[1] Հմմտ. Հ. Ն. Ակինեան՝ Յակոբ երէց Թոխաթեցի. Հանդէս Ամսօրեայ, 1921, էջ 273—285, 374—385, 472—485 = Հինգ պանդուխտ տաղասացներ. Վիեննա 1921, էջ 141—202:

© National Library of Armenia